ԼՂԻՄ. Պահպանել հանգստությունն ու տոկունությունը

Ամեն մի նոր օր, որը երկիրը մոտեցնում է ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարցին նվիրված պլենումին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանի աշխատանքին, որտեղ պետք է քննության առնվի Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, ավելի ու ավելի է սրում իրավիճակը ինքնավար մարզում և մանավանդ սահմանակից ադրբեջանական շրջաններում: Այդ կապակցությամբ ԼՂԻՄ են մտցվել ներքին զորքերի լրացուցիչ ուժեր: Ուժեղացվել են կարգախմբերը ճանապարհներին և մարզի որոշ գյուղերում:

Երկրամասի բնակիչների համար անսպասելի բան եղավ այս տարվա սեպտեմբերի 1-ին մարզի հեռուստատեսության ծրագրի հաղորդման ձախողումը, ընդ որում, միաժամանակ եթեր դուրս եկավ Շուշիի այսպես կոչված ստուդիան: Ըստ էության տեղի ունեցավ եթերի անօրինական զավթում առանց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների կոմիտեի ղեկավարությունների գիտության: Նման ձեռնարկումները ամենևին չեն ծառայում ռեգիոնի իրադրության նորմալացման նպատակներին: Մարզի հեռուստաժուռնալիստները և ռադիոժուռնալիստները այդ մասին տեղյակ պահեցին համապատասխան վերադաս ատյաններին և սեպտեմբերի 4-ին ի նշան բողոքի հայտարարեցին մեկօրյա գործադուլ:

Դրա հետ մեկտեղ Արցախում և նրա կենտրոնում՝ Ստեփանակերտ քաղաքում աշխատանքային ռիթմը կարգավորվում է: Գործում են բոլոր ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկները: Մեր բազմազգ հասարակության կարևոր իրադարձությունների շեմին նկատելիորեն ակտիվանում է մարզի քաղաքական կյանքը: Տեղի են ունենում Ազգային խորհրդի նախագահության նիստեր, որտեղ քննարկվում են ԼՂԻՄ-ի սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման, երկրամասի իրադրության կայունացման ընթացիկ հարցերը: Իրենց ընտրողների հետ հանդիպումներ են ունենում ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները:

Բնակչության կարիքների բավարարման նպատակով օգոստոսի 30-ից մտցված են Գորիս-Մարտակերտ-Գորիս, Գորիս-Գետաշեն-Գորիս, Գորիս-Հադրութ-Գորիս մարդատար ավիաուղերթերը, որոնք կատարվում են ՄԻ—8 27 տեղանոց ուղղաթիռներով:

Անցած ուրբաթ օրը Ստեփանակերտում տեղի ունեցած հերթական միտինգում քաղաքի բնակչությանը կրկին կոչ արվեց չենթարկվել հնարավոր ամեն տեսակ պրովոկացիաների, պահպանել հանգստություն և տոկունություն, լինել զգոն: ԼՂԻՄ-ի պրոբլեմը պետք է լուծվի միայն հանգիստ, կոնստրուկտիվ իրադրության մեջ: Այդ գործում հույզերը վատ դաշնակից են:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ



ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— ⊙ Գանձասար. տասներեքդարյա խաչքարեր:
⊙ Անդրադարձ:
⊙ Արևելյան այս սոսին գտնվում է Մարտունու շրջանում: Երկու հազարամյա այս հսկայի բնի շրջագիծը 950 սմ է, բարձրությունը՝ 40 մետր, 15—20 մարդ կարող է հյուրընկալվել նրա բնում:

Լուսանկարները՝ ՀՈՎՀ. ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ